ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ

ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ»
ՍՈՑԻԱԼ-ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Խումբ Հայոց լեզու և գրականություն

Թեմա Ընթերցման տեխնիկայի
զարգացման իմ
փորձն ու նկատառումները

Հետազոտող՝ Գոհարիկ Մկրտչյան

Սյունիքի մարզի Գորիսի Ա. Բակունցի անվան 1
ավագ դպրոց հայոց լեզվի և գրականության
ուսուցիչ

Ղեկավար՝ Նելլի Ղուշունց

ԳՈՐԻՍ 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

Գլուխ առաջին

Ընթերցման տեխնիկայի զարգացման իմ փորձն ու նկատառումները

1.1 **Ընթերցման կարողությունների և ընթերցասիրության ձևավորում** 4

1.2 Գեղարվեստական երկի նպատակային ընթերցում 4

1.3 **Գեղարվեստական երկի ստեղծագործական ընթերցում** 5

1.4 Բառապաշարի հարստացում 6

1.5 Բառային աշխատանք թատերգության շուրջ 6

1.6 **Արտադասրանական ընթերցանություն** 11

Գլուխ երկրորդ

Գործնական մաս. ակտիվ ընթերցանության ռազմավարություններ

2.1 Ակտիվ ընթերցանության բանալի ռազմավարություններ 12

2.2 Ակտիվ ընթերցանության այլ ռազմավարություններ 17

2.3 Ուսուցման առցանց միջոցների կիրառում 21

Եզրակացություն 22

Գրականության ցանկ 22

Ներածություն

«Ընթերցանությունը… դրված է ուսուցման հիմքում և համարվում է կյանքի ամենաանհրաժեշտ հմտություններից մեկը: Մարդիկ, ովքեր կարողանում են լավ կարդալ, իրենց ներդրումն են ունենում ծաղկող, աշխատունակ հասարակության ստեղծման գործում: Նույն ժամանակ հենց իրենք ապրում են ավելի հագեցած կյանքով»[1]:

Աշխատանքի առարկան ընթերցանությունն է,որը խորհրդանիշերի վերծանման բարդ ճանաչողական գործընթաց է՝ ուղղված տեքստի հասկանալուն: Լեզվի յուրացման, հաղորդակցության, տեղեկության և գաղափարների փոխանակման միջոցներից մեկը:

Ընթերցանությունը տեքստի և կարդացողի միջև բարդ փոխազդեցություն է, որը ձևավորվում է նախնական գիտելիքների, փորձի և կարդացողի լեզվային ընդհանրության վերաբերմունքի հիմքի վրա՝ պայմանավորված մշակույթով և սոցիալական վիճակով: Բացի այդ, ընթերցանությունը պահանջում է ստեղծագործական մոտեցում և քննադատական վերլուծություն: Ընթերցանության մեջ չկան կանոններ, ընթերցողին ընթերցանությունում ոչինչ չի սահմանափակում: Այն օգնում է հետազոտել տեքստերը մեկնաբանության ընթացքում[2]:

Աշխատանքի նպատակն է <u>ցույց տալ, որ</u> ընթերցողները օգտագործում են ընթերցանության տարբեր ռազմավարություններ՝ ընտրելով հարմարության նկատառումներից: Որոշ դեպքերում գրքերում օգտագործում են ծանոթագրություններ, որոնք բացատրում են անծանոթ բառերի իմաստները:

Ինչպես նաև ընթերցանությունը հնարավորություն է ընկալելու, հասկանալու ինֆորմացիան՝ գրված (փոխանցվող) այս կամ այն միջոցով, վերարտադրելու տեխնիկական սարքերով:

Աշխատանքը բաղկացած է ներածությունից, համապատասխան ենթագլուխներ պարունակող երկու գլուխներից, եզրակացությունից և օգտագործած գրականության

[1] «Կարդալը կարո՞ղ է մեզ ավելի երջանիկ դարձնել»: 2017-08-15- Վիքիպեդիա

[2] Դե Սերտո, Միշել. «Կարդալը որպես որսագողություն». Առօրյա կյանքի պրակտիկա. Տրանս. Սթիվեն Ֆ. Ռենդալ 1984. 165-176, Վիքիպեդիա

ցանկից: Ներկայացնում եմ նաև դասարանում կիրառած **ակտիվ ընթերցանության որոշ ռազմավարությունների** օրինակներ:

Գլուխ առաջին

1. Ընթերցման տեխնիկայի զարգացման իմ փորձն ու նկատառումները

1.1 Ընթերցման կարողությունների և ընթերցասիրության ձևավորում

Ընթերցման կարողությունների և ընթերցասիրության ձևավորումը վճռական նշանակություն ունի անձի զարգացման համար , քանի որ դրանով անհատը ձեռք է բերում մարդկային իմացության նվաճումներին հաղորդակից լինելու հնար: Ընթերցանությունը հետապնդում է գործնական , կրթական , դաստիարակչական նպատակներ, որոնց համակարգում կարևոր է, որ աշակերտը վարժ ու սահուն կարդալ սովորի, անընդհատ տեղեկատվություն ձեռք բերի, դառնա ընթերցող, ընթերցասեր:

Ընթերցանության կազմակերպման բազմաթիվ մեթոդներ և մեթոդական հնարներ են մշակված, որոնք բնագրի վրա տարվող աշխատանքը պետք է դարձնեն բազմազան: Գրական երկի գեղեցիկ ընթերցումը դժվարին գործ է: Դրան հասնելու համար հարկավոր է ոչ միայն կատարել լուրջ ու տևական աշխատանք, այլև գործադրել մեթոդական ճիշտ եղանակներ:

Դասի ընթացքում գեղեցիկ ընթերցման օրինակ պետք է ցույց տա ուսուցիչը. ինքն էլ պետք է լինի նյութի առաջին ընթերցողը: Մինչ երկի ընթերցումը՝ ուսուցիչը պետք է իմանա նրա յուրաքանչյուր պարբերությունը, նախադասությունն ու բառը ինչպիսի շեշտադրությամբ, հնչերանգով պետք է կարդալ:

Գեղարվեստական երկերի ընթերցումը լինում է երկու տեսակ՝ նպատակային և տարերային:

1.2. Գեղարվեստական երկի նպատակային ընթերցում

Նպատակայինը բացահայտում է գրական երկը ձևի և բովանդակության միասնության մեջ: Սա ակտիվ գործընթաց է: Ընթերցանության այս ձևը բացահայտում է բառի անպարագիծ աշխարհը, որը բաղադրված է բնության գույներից, բույրերից, ձայներից, մարդկային բանականության և հույզերի ներդաշնակությունից: Բառի գեղարվեստական, բանաստեղծական և կոլորիտային հարուստ երանգապնակի առանձնահատկությունների շնորհիվ է, որ մեծ են Նարեկացին, Թումանյանը, Իսահակյանը, Վարուժանն ու Մեծարենցը, Չարենցն ու Դեմիրճյանը…. Մեկի մոտ բառերից ճառագում է լույսը, լսվում են խորհրդավոր մեղեդիներ, մեկի մոտ բառին արտահայտչականություն է տալիս հեթանոս ոգին, մյուսի մոտ՝ բնության երկնառաք աղոթքը: Բառի հրաշքի ըմբռնումը ուժեղացնում է գրական ստեղծագործության հուզական և գեղագիտական ներգործությունը: Գեղարվեստական ստեղծագործությունների ուշիմ ընթերցումով աշակերտը ճանաչում է մարդուն և աշխարհը, ճանաչում և հայտնագործում է իրեն, հանդիպում երբևէ համակած ապրումների, երազանքների ու խոհերի, թափանցում մարդու բարդ ու նուրբ հոգեբանության ոլորտները, իմաստավորում դրանք, սովորում ճիշտ ապրել: Ուսուցանվող երկը կարող է դեռահասի համար դառնալ աշխարհի ու մարդու վրա բացվող լուսավոր պատուհան, եթե քրտնաջան աշխատի տվյալ ստեղծագործության, հատկապես՝ գեղարվեստական բառի վրա: **Աշակերտը պետք է դառնա գրողի ստեղծագործական լաբորատորիայի զգայաչափը**:

1.3. **Գեղարվեստական երկի ստեղծագործական ընթերցում**

Գեղարվեստական երկի ստեղծագործական ընթերցումը իրականացվում է տանը և դպրոցում, հատկապես՝ դասի ընթացքում՝ ուսուցչի անմիջական ղեկավարությամբ: Ուսուցիչը պետք է լինի օրինակելի ընթերցող, ասմունքող, մեկնաբան, մեկնող, ցուցադրող: Նա պետք է ներդաշնակություն ստեղծի երկի հիմքում ընկած ապրումի և աշակերտի հոգեկան ռիթմի միջև: Ընթերցումը գրական երկի վերլուծության իրական ուղիներից մեկն է: **Արտահայտիչ ընթերցել նշանակում է ճիշտ կարդալ կետադրական նշանները, նուրբ արվեստով կիրառել հոգեբանական դադարները, որոնք չեն կետադրվում, բայց օգնում են առավել լիարժեք բացահայտել ստեղծագործության հոգեբանական ենթատեքստը**:

Փոքրածավալ գրվածքը դասարանում առաջին անգամ ընթերցվում է ամբողջութ յամբ: Միջին ծավալի կամ մեծածավալ գրվածքի միայն այն մասը, որը հանձնարարվում է տանը սովորելու համար: Բացատրվում և գրվում են դժվար հասկանալի մտքերը, գրական, գրաբարյան, բարբառային, փոխառյալ բառերը բնագրում:

1.4. Բառապաշարի հարստացում

Բառապաշարը հարստացնելու համար շատ բառեր իրենց հոմանիշներով ու բացատրություններով գրվում են բառատետրերում: Դասարանում ընթերցանության ժամանակ շտկվում են արտասանության, առոգանության հետ կապված բոլոր սխալները: Աշակերտները ավելի շատ դժվարանում ու սխալներ են անում շեշտադրության և դադարառության դեպքում: Ասմունքի համար նյութը մշակելիս հիմնականում պահանջվում է տեսողական վերլուծություն: Ոչ թե հեղինակն այստեղ այսպես է ասում, այլ ես այսպես եմ պատկերացնում իմ ասելիքը: Եվ դրան հասնելու համար հանձնարարվում է աշակերտին իր բառերով պատմել ուսուցանվող երկը, որը նախապայման է ստեղծում որոնելու և ինքնուրույն գտնելու արտահայտչական միջոցներ: Երբ աշակերտը պատմում է իր խոսքերով, իր արտահայտչամիջոցներով ստեղծում է իր խոսքարվեստը, որն էլ հարկավոր է ասմունքի համար: Նյութն ամբողջությամբ ընկալվելուց հետո բաժանվում է գեղարվեստական հատվածների և վերլուծվում: Հատվածների բաժանվելիս պետք է հիշել, որ յուրաքանչյուր գեղարվեստական մաս կամ կտոր պիտի ունենա որոշակի սկիզբ և վերջ, պիտի լինի ամբողջական մաս: Պիտի պարզել, թե գրական երկի որ հատվածն է իր մեջ ամփոփում նյութի հիմնական միտքը և անգիր ասելիս այդ հատվածը առավել արտահայտիչ դարձնել: Ասմունքողը պետք է տեսնի պատկերը և ձայներանգի միջոցով արտահայտի զգացածը ՝ ենթատեքստը: Երկն ընթերցողը հնչող գեղարվեստական խոսքի համար պետք է ունենա երկի կատարողական արվեստի որակը որոշող երկու կարևոր խնդիր՝ ինչ եմ ասում, որը մեր մշակած նյութն է, ում եմ ասում, որ ասմունքողի օբյեկտն է: Այս երկու տարրերի առկայությունից ծնվում է երրորդ անհրաժեշտը. ինչպես եմ ասում. որ գեղարվեստական կատարումն է: Այս ամենատարրական սկզբունքները անպայման պետք է ուսուցանել սովորողներին:

1.5 Բառային աշխատանք թատերգության շուրջ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Ա. Պետրոսյան)

ԹԵՄԱՆ՝ Վիլյամ Սարոյանի, «Իմ սիրտը լեռներում է» թատերգությունը

Սիրելի աշակերտ, աղյուսակի 1-ին սյունակում տրված բառերը բացատրի՛ր Էդվարդ Աղայանի «Արդի հայերենի բացատրական բառարան»-ով կամ Ա. Սուքիասյանի «Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանով», որոնք կգտնես այս հղումով՝ nayiri.com, ամեն բառի բացատրությունը, հոմանիշները գրի՛ր բառի դիմաց՝ 2-րդ սյունակում, իսկ 3-րդ սյունակում թատերգությունից դո՛ւրս գրիր այն նախադասությունը, որում կիրառվել է այդ բառը: Քեզ օգնելու համար տրված է նմուշ-օրինակ:

1.ԲԱՌԸ	2. ԲԱՌԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ԿԱՄ ՀՈՄԱՆԻՇ(ներ)Ը	3. ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆԸ, ՈՐՏԵՂ ԿԻՐԱՌՎԱԾ Է ԲԱՌԸ
Ռոբերտ Բյորնս	Շոտլադացի բանաստեղծ/1759-1796/	«Իմ սիրտը լեռներում է» բանաստեղծության հեղինակ
քարվեժ	Լեռնալանջերից թափվող քարեր	Մնաք բարով, մթին թավ անտառներ քարվեժ...
գեղգեղանք	Ձայնի երանգ, ելևէջ, երգ, դայլայլ	Առավոտյան լսեցինք, որ տատիկը գեղգեղում է ճիշտ ու ճիշտ դեղձանիկի պես, ու հայրս ասաց.

սափոր	կուժ, կահույր, թակույկ, դորակ	Մի սափոր ջուր բեր նրան, քանի դեռ չի ընկել մեռել...
խռնչալ	Խռպոտ ձայն արձակել, խռպոտ ձայնով խոսել՝ երգել	Մաք –Գրեգորը (խռնչալով) զգուշացնում եմ, դուք ինձ ետ չեք տանի...
ումպ	Կում, խում, պուտ, կլտում, կուլտում (բրբ-):	Մի ումպ էլ է խմում...
մտախոհ	Մտածմունքների մեջ սուզված, մտազբաղ:	Հայրս նստել էր սեղանի մոտ մտախոհ գլուխը դրած ձեռքերին...
տրտմագին	վշտագին, կսկծագին, ցավագին, տխուր, տրտում, տխրագին, տրտմական:	Ուր էլ թափառեմ ես ու դեգերեմ տրտմագին:
մղոն	Տարածության չափ, որ հավասար է 1000 երկրաչափական կամ հասարակ քայլի:	Այստեղից մինչև մեր տունը հազիվ հինդ հազար մղոն լինի,- ասաց նա:

նպարեղեն	Սննդամթերք,ընդեղեն,նպար, սննդանյութ, պարեն, պաշար, պարենամթերք, ուտելեղեն, մթերապաշար, կենսամթերք, սնունդ, ուտելիք, ուտեստ, նպարակ, մթերք,պաշարեղեն	Ջոնին դուրս է վազում փողոց պարոն Կոսակի նպարաեղենի խանութը:
ֆունտ	Ծանրության ռուսական հին չափ = 409,5 գրամի, գրվան քա: Չափի ու կշռի անգլիա կան սիստեմում՝ ծանրութ յան չափ =453,6 գրամի: (հնացած) Գազի՝ շոգու ևն ճնշման չափի միավոր:	Գնա, գնա, – ասաց հայրս, – համոզիր, որ մեկ հատ ֆրանսիական բատոն տա ու մի ֆունտ պանիր: Դու այդ բանը կարողանում ես:
սենթ	գումար	Ես ոչ մի սենթ չունեմ Ջոնի:
դուքս	Իշխան, կոմս, ազնվական:	Կվերադառնաս արքայա վայել ուտելիքով կամ առնվազն դուքսին վայել:
արիական ցեղ	Տոհմ, զարմ, ճետ, սերունդ, ազգատոհմ, ընտանիք, տուն:	Դե ես հենց այնպես, խոսե լու համար,-ասացի:-Դուք հավանորեն կհուսայիք, թե արիական ցեղի որևէ ներկայացուցիչ անպայ ման կօգնի ձեզ, ճի՞շտ է, միստր Կոսակ:

գավիթ	Բակ. շրջափակ, փարախ, գոմ, մակաղատեղ, մակաղատեղի, մակաղ, ոչխարանոց, գիուկ, բեր: 2. Նախադուռ (ն), վայրա գավիթ, շվաք (բրբ.): Նախասեն յակ, նախասրահ, նախագավիթ, հաշտ, միջանցք, մուտք:	Նրա տատը կանգնած է գավիթում:
ագարակատեր	Ագարակի տեր, ֆերմեր:	Հա ,բայց եթե արածս գողություն է,եթե դա ագարակատիրոջ շունն է, ինչ անեք:
հողմացույց	Կայմի՝ ձողի ծայրին ամրացված թիթեղյա շարժական լեզվակ, որի պտույտով որոշում են քամու ուղղությունը:	Ջրով ծածկեցեք աշտարակներն ու հողմացույցները:
ծծմբաբոցեր	Այրվող նյութից բարձրացող հրեղեն գոյացություն: 2. Որոշ նյութերի այրումից առաջացող լուսավոր գազ կամ շոգի:	Ծծմբաբոցեր, որ սլանում են մտքերից արագ:
կաղնահեղձ	Հեղձված, խեղդված:	Կաղնահեղձ շանթի դուք սուրհանդակներ:
տարափ	Մեծ հորդությամբ թափվող ձյան՝ անձրևի՝ կարկուտի քանակություն, մեծ հորդություն, հեղեղ	Ժայթքիր, դու, կրակ, տարափիր անձրև:

կռապաշտ	Կուռք պաշտող, կուռքերին երկրպագող, հեթանոս:	Ահա թե ես ինչ եմ ասում. ձեր չորս կողմը Չինաստա նում կռապաշտներ են, և դուք նրանց մեջ մեռնում եք սովից...
ջանալ	Աշխատել, ձգտել, ճգնել, տքնել, հետամտել, նկրտել, (հնց.) դարլակել, հողալ, հողանալ,	Ասում է, որ մենք չենք ջանում ու երբեք չենք վճարում ըստ հաշիվների: Մենք նրան պարտք են քառասուն սենթ:

1.5.**Արտադասրանական ընթերցանություն**

Աշակերտների մտահորիզոնի ընդլանման, բառապաշարի հարստացման, գրական ճաշակի ձևավորման կարևորագույն օղակներից մեկն էլ **արտադասարանական ընթերցանությունն** է: Սովորաբար ամեն ուսումնական տարվա վերջում հանձնարարում եմ հաջորդ տարվա համար նախատեսված արտադասարանային թեմաները՝ արձակուրդին ընթերցելու: Ինչպես նաև հանձնարարում եմ գրել կարդացած գրքի համառոտ բովանդակությունը, հերոսների անունները: Տրամադրում եմ նաև իմ գրադարանը: Նոր ուսումնական տարին սկսում եմ՝ լսելով ընթերցած գրքերը:

Ղ. Աղայանի «Անահիտ» հեքիաթի և Դ. Սահակյանցի «Անահիտ» մուլտֆիլի նմանությունները և տարբերությունները (Տ. Հովակիմյան, 5-րդ դասարան)

«Անահիտ» հեքիաթում և մուլտֆիլմում նախաբանները մի փոքր տարբերվում են իրարից: Հեքիաթում Վաչագան արքայազնի օգնականի անունը Վաղինակ է, իսկ մուլտֆիլմում՝ Սերոբ: Հեքիաթում չար հերոսը քրմապետն է, իսկ մուլտֆիլմում՝ թագավորի ծառան: Վերջաբանում նույնպես կան տարբերություններ: Չնայած այս տարբերություններին՝ հեքիաթը և մուլտֆիլմը ամբողջությամբ ունեն նույն բովանդակությունը: Երկուսում էլ Վաչագանը փրկվում է արհեստի իմացությամբ: Ե՛վ

հեքիաթում, և՛ մուլտֆիլմում չար հերոսը արժանանում է նույն պատժին, իսկ մյուս հերոսները ապրում են հաշտ ու համերաշխ և ավելի զարգացնում իրենց երկիրը:

Իմ կարծիքով «Անահիտ» հեքիաթը և մուլտֆիլմը ունեն խրատական իմաստ, և ես ինքս շատ բան սովորեցի: Հեքիաթը կարդալուց և մուլտֆիլմը դիտելուց հետո հասկացա, որ կյանքում երբեմն մարդուն փրկում է ոչ թե հարստությունը, այլ արհեստը: Ինձ ավելի դուր եկավ մուլտֆիլմը, որովհետև այնտեղ կերպարները շարժուն են, և այդպես ավելի հեշտ է ընկալել ողջ հրաշքը: Բարու և չարի պայքարը ես շատ հավանեցի և ավելի ոգեշնչվեցի, երբ վերջում բարին հաղթեց:

2. Գործնական մաս. ակտիվ ընթերցանության ռազմավարություններ

2.1 Ակտիվ ընթերցանության բանալի ռազմավարություններ. ի՞նչ է ակտիվ ընթերցանության բանալի ռազմավարությունը: (Շնորհակալություն, «Զանգակ»)

Ակտիվ ընթերցանության ռազմավարությունը մտավոր գործընթաց է, որն առավել արդյունավետ ընթերցանություն իրականացնողը կատարում է ընթերցելիս:

Ընթերցողական ռազմավարությունները ենթադրում են կարդալ քննադատաբար՝ կենտրոնանալով նյութի վրա, ակտիվորեն թափանցելով նյութի մեջ և ընթերցանության ժամանակ վերահսկելով սեփական մտավոր աշխատանքը:

Ակտիվ ընթերցանություն իրականացնելով՝ ընթերցողները ձեռք են բերում քննադատական մտածողության բարձր մակարդակ, որն օգնում է հեշտորեն հասկանալունընթերցածը և թույլ է տալիս ընթերցողներին երկար ժամանակ մտապահել ձեռք բերած տեղեկությունները:

Ահա ընթերցանության 8 կարևոր ռազմավարություններ, որոնք կարող ենք համարել **ակտիվ ընթերցանության** բանալի ռազմավարություններ: **(Տես նկարը)**



«Սասնա ծռեր» (Լ. Զաքարյան, 9-րդ դասարան)

1. **Ինչ կլինի հաջորդիվ:**

Սասնա ծռեր էպոսը կտարածվի ապագա սերունդների մոտ, և նրանք կհասկանան,թե ինչ յուրահատուկ էպոս ունի հայ ազգը:

2.Կարևորի դուրսբերում:

Սանասարն ասաց - Բավ է, պապիկ,
Էլ ձեն մի հանի, էլ անուն մի դիր.
Այ պապի, անուն դրվավ,
Անուն էղավ Սասուն:
Քանց էդա ավել էլ ինչ անուն:

Որ դու ասիր՝ սասուն քարեր,
Քարե սան սուն եք զարկե,
Մեր բերդի անուն էղավ Սանսուն,Սասուն:
Մեր բերդի անուն՝ Սասնա տուն:
Ու էն բերդի անուն կոչվավ Սասուն,
Էն տան անուն մնաց Սասնա տուն:

3.Որն է երկի առանցքը:

Որ Սանասարը,Միերը,Դավիթը և Փոքր Միերը պայքարեցին Սասնա տան և Սասնա ժողովրդի համար:

4. Եզրակացություն:

Յուրաքանչյուր ոք սիրում է իր ծննդավայրը, և կարող է անվերջ պայքարել դրա ազատության համար:

5. Ինչ եմ պատկերացնում աչքերս փակելիս:

Տեսնում եմ Սանասարին ու Բաղդասարին, ովքեր կառուցեցին Սասնա տունը: Միերին՝ ով երկու մասի բաժանեց առյուծին:Քաջ Դավթին՝ ով պայքարեց Մսրա Մելիքի դեմ և հաղթեց նրան:Փոքր Միերին՝ով առավ իր ծնողների մահվան վրեժը:

6.Որ հարցերը կօգնեն դա հասկանալուն:

Արդյոք վեհ պահվեց Սասունի և ժողովրդի պատիվը:

7. Ինչ զուգահեռներ կարող եմ անցկացնել:

Ինչպես Միերը երկու մասի բաժանեց առյուծին, այնպես էլ Դավիթը երկու մասի բաժանեց Մսրա Մելիքին:

8. Ինչը չեմ հասկացել:

Ինչու Չմշկիկ Սուլթանի աղջիկը սպանեց Դավթին, չէ որ Դավիթը նրա հայրն էր:

«Մովսես Խորենացի» (Ա. Պողոսյան, 9-րդ դասարան)

1. Ինչ կլինի հաջորդիվ:

Հայաստանը առաջին անգամ կբաժանվի 387 թվականին Հռոմի և Պարսկաստանի միջև ու կկորցնի իր պետականությունը: Որոշ ժամանակ այն կմնա վատ վիճակում և տնտեսությունը կթուլանա : Սակայն հայ ժողովուրդը՝ չնայած իր կոտրված վիճակին՝ ոտքի կկանգնի և կկարողանա իր պետականությունը վերականգնել, որը նոր հույս կծնի հայոց պատմության մեջ:

2. Ո՞րն է հատվածի կարևոր միտքը:

Ամբարիշտներին խաղաղություն չկա:

3. Ո՞րն է երկի առանցքը:

Մովսես Խորենացին իր աշխատության մեջ ներկայացրել է Հայկի ապրած ժամանակներից մինչև իր ապրած ժամանակներն ընկած ժամանակահատվածի հայոց պատմությունը: Նախ՝ առաջին մասը ներկայացնում է հայոց պատմությունը ամենասկզբից մինչև Ք.ծ.ա. 132 թվականը: Երկրորդ մասում Ք.ծ.ա. 132 թվականից մինչև 318 թվականը: Երրորդ մասն էլ ներկայացնում է 318-428 թթ.-ի իրադարձությունները:

4. **Ո՞րն է հեղինակի չասած միտքը:**

Հայ ժողովուրդ եղեք համախմբված և միասնական: Մնացած ամեն ինչը կանցնի ու կգնա:

5. **Ի՞նչ եմ պատկերացնում աչքերս փակելիս:**

Աչքերս փակելիս պատկերացնում եմ հայ ժողովրդի ծանր վիճակը պետականությունը կորցնելու ժամանակ: Նաև պատկերացնում եմ Մովսես Խորենացու թախծոտ դեմքը այս ամենը գրելու ժամանակ: Քանի որ հասկանում եմ , որ նրա համար հեշտ չէ եղել այս ամենը ներկայացնել: Աչքերս փակելիս ես պատկերացնում եմ հայ ժողովրդի անհույս դրությունը, որովհետև այդ իրավիճակում այլևս որևէ հույս չկար:

6. **Ո՞ր հարցերը կօգնեն դա հասկանալուն:**

Ինչպիսի վիճակում էր գտնվում հայ ժողովուրդը պետականությունը կորցնելուց հետո:
Ձեր կարծիքով արդյոք Մովսես Խորենացուն հեշտ էր այս ամենը ներկայացնել:
Ձեր կարծիքով հայ ժողովուրդը այդ ժամանակ ինչպիսի դրության մեջ կհայտնվեր:

7. **Ի՞նչ զուգահեռ կարող եմ անցկացնել:**

Զուգահեռ կարող եմ անցկացնել Փավստոս Բուզանդի «Հայոց պատմություն» աշխատության հետ, քանի որ երկու աշխատություններն էլ մեզ հնարավորություն են տալիս տեղեկացված լինել մեր նախնիների պատմությունից: Ինչպես նաև երկուսն էլ ներկայացնում են մեր թագավորական շրջանի ժամանակաշրջանները: Ու երկու աշխատություններն էլ գրեթե ներկայացնում են նույն ժամանակաշրջանը:

8. **Ի՞նչը չեմ հասկացել:**

Ինչո՞ւ է միշտ հայի ճակատագիրը այսքան դաժան: Ինչո՞ւ միշտ հայը պետք է լինի ուրիշի լծի տակ: Ինչո՞ւ պետք է իր հայրենիքը պաշտպանելու համար վճարի իր կյանքի գնով: Եվ ինչո՞ւ հայը ծանր վիճակում, ցավոք, չի գիտակցում, որ պետք է համախմբված լինի: Վերջինս մեր ամենամեծ սխալն է:

«Մովսես Խորենացի» (Ա. Մարտիրոսյան,10-րդ դասարան)

1.**Կանխատեսում: Ի՞նչ կլինի հաջորդիվ:**

Կմահանա Խորենացին. նրա մահը այդքան ծանր էլ չեն տանի, քանզի շատ քչերն էին գնահատում նրան: Հայաստանի վիճակն ավելի կծանրանա, և Խորենացու «Ողբ»-ը ավելի շատ կհամապատասխանի տվյալ իրավիճակին: Հայաստանը կկորցնի

անկախությունը և կհայտնվի այլ երկրների տիրապետության տակ՝ մինչև Բագրատունյաց արքայատոհմի հաստատվելը:

2.Կարևորի դուրսբերում : Ո՞րն է հատվածի կարևոր միտքը:

Եվ ի՞նչ է այս բոլորի ապացույցը, եթե ոչ այն, որ Աստված մեզ անտես է արել, և տարրերը փոխել են իրենց բնույթը. գարունը՝ երաշտ, ամառը՝ սաստիկ անձրևային, աշունը՝ ձմեռ դարձած, ձմեռը՝ սաստիկ ցուրտ, մրրկալից և երկարատև: Քամիները՝ բուքեր բերող, խորշակի փոխված, ցավեր տարածող, ամպերը՝ կայծակներ թափող, կարկտաբեր, անձրևներն՝ անժամանակ և անօգուտ, եղանակը՝ դաժան, եղյամ բերող, ջրերի անօգուտ ավելանալը և չափից դուրս պակասելը, երկրի պտղաբերությունը՝ նվազած, անասունների աճելությունը՝ պակաս, այլև երկրաշարժներ և սասանումներ: Եվ այս բոլորի վրա ամեն կողմից խռովություն, համաձայն այն խոսքի, թե **ամբարիշտներին խաղաղություն չկա**: Որովհետև մեզ տիրեցին խստասիրտ ու չար թագավորներ, ովքեր ծանր, դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ են տալիս: Կառավարիչները կարգ չեն պահպանում, անողորմ են, սիրելիները դավաճանված են, թշնամիները՝ զորացած, հավատը ծախվում է այստեղի ունայն կյանքի համար: Ասպատակություններ են գալիս անհատնում, շատ տեղերի վրա, տները գերվում են, ստացվածքները՝ հափշտակվում, գլխավոր մարդիկ կապվում են, հայտնի անձեր բանտարկվում են, դեպի օտարություն են աքսորվում ազնվականները, անթիվ նեղություններ են կրում ռամիկները, առնվում են քաղաքներ, քանդվում են ամրոցներ, ավերվում են ավաններ, հրդեհվում են շինություններ, անվերջ սովեր և հիվանդություններ և բազմատեսակ համաճարակներ: Աստվածապաշտությունը մոռացված է, դժոխքի ակնկալություն...

3. Ամփոփում : Ո՞րն է երկի առանցքը:

Մենք՝ հայերս, շատ տարբեր ենք:Մենք չենք սիրում համախմբվել, չենք սիրում նայել մի ուղղությամբ: Մենք սիրում ենք դավաճանել միմյանց, և, չգիտես ինչու, հաճույք ենք ստանում դրանից: Մենք կարող ենք լինել նաև շատ լավը (եթե, իհարկե, ուզենք):Կարճ ասած՝ մենք ծայրահեղականությունից ծայրահեղականություն ենք:

4. Եզրակացություն : Ո՞րն է հեղինակի չասած միտքը:

Եթե շարունակենք այսպես, ապա կկործանվենք:

5.Մտապատկերում : Ի՞նչ եմ պատկերացնում աչքերս փակելիս:

Պատկերացնում եմ Հայաստանը իր հզորության գագաթնակետին, և Հայաստանը՝ այժմ: Մենք, իրոք որ, ծայրահեղությունից ծայրահեղություն ենք:

6.Հարցադրում : Ո՞ր հարցերը կօգնեն դա հասկանալու:

Ինչո՞ւ ենք մենք սիրում տարբերվել միմյանցից և բարդ իրավիճակներ առաջացնել բոլորիս համար:

7. Կապերի ստեղծում : Ի՞նչ զուգահեռներ կարող եմ անցկացնել:

Այդ ժամանակվա Հայաստանը և այժմյան Հայաստանը...

8. Դիտարկում : Ի՞նչը չեմ հասկացել:

Ինչպե՞ս էր Խորենացին կանխագուշակել մեր ապագան:

2.2 Ակտիվ ընթերցանության այլ ռազմավարություններ

Մայրենի 6 -ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Դ. Աթաբեկյան)

ԹԵՄԱՆ՝ Ստ. Զորյանի «Պապն ու թոռը» պատմվածքը

Առաջադրանք: Բառային և տեքստային աշխատանք՝ ըստ պատմվածքի:

Սիրելի աշակերտ, մեկ անգամ էլ ուշադի՛ր կարդա պատմվածքը և աշխատի՛ր:

1.Բացատրի՛ր կարմիր գրված բառերը և գործածի՛ր նախադասությունների մեջ:

Տարակուսանք -կասկած Հինավուրց -վաղնջական

Արտույտ -երգեցիկ թռչուն Շրշյուն -խշշոց, սոսափ

Ես և քույրս բավական կասկածամիտ ենք:

Մատենադարանում պահվում են մագաղաթյա, հինավուրց, արժեքավոր տարբեր գրքեր:

Ես սիրում եմ լսել իմ անտառի երգեցիկ թռչունների ծլվլոցը:

Անտառի խորքում լսվում է քամուց օրորվող տերևների շրշյունը:

2.Տեքստից դո՛ւրս գրիր ժողովրդական-խոսակցական բառերը: Գրի՛ր դրանց գրական համարժեքները:

Թախտ - բազմոց Ջահել - երիտասարդ

Գերանդի - մանգաղ Բաղ - այգի

Հանդ - դաշտ Հրես - ահա

Ման ածել - տանել զբոսանքի

3.Գույն և երանգ բառերով կազմի՛ր նոր բառերով՝ գործածելով բառի սկզբում և վերջում:

Գույնզգույն- գունավոր, գունառատ, գունատ, գունակ,անգույն,

շագանակագույն, նարնջագույն, ծիրանագույն

Երփներանգ- բազմերանգ, երանգաշատ

4.Նորի՛ց կարդա անտառի պատկերը և նկարագրի՛ր քո տեսած անտառը:

Երբ կարդում էի պատմվածքը, անտառի տեսարանի հատվածում ինձ թվաց, թե հեղինակը նկարագրում է հենց իմ ծննդավայրի՝ Գորիսի անտառը, մտովի հայտնվեցի այնտեղ: Եվ հիմա, երբ աչքերս փակում եմ, կրկին տեսնում եմ իմ ու պապի անտառը: Լսում եմ անտառի խշշոցը, բզեզների բզզոցը, մեղուների երգը, թռչունների ծլվլոցը, առվի քչքչոցը, զգում եմ անտառի բույրը: Փորձում եմ պատկերացնել, թե որքա՞ն գեղեցիկ, բայց միևնույն ժամանակ որքա՞ն տխուր է իմ անտառը: Այն հագել է իր տոնական ոսկեդեղին և կարմիր զգեստները, որոնք շուտով կքշի աշնան ցրտաշումչ քամին: Եվ անտառը մերկ կդիմակայի մի ամբողջ երկարատև ձմեռան:

5. Վերարտադրի՛ր պապի հիշողությունները: Պապն ինչպե՞ս էր «տեսնում» աշխարհը:

Պապը ցանկացավ հիշել իր ջահել ,առողջ ժամանակները: Հիշեց, թե ինչպես էին ինքն ու իր հայրը գնում եկեղեցի՝ զատկի տոնին մասնակցելու ,հիշեց իր պսակի օրը, ինքն իրեն տեսավ հասակն առած տղամարդ ՝ գերանդին ձեռքին, դաշտը հնձելիս:

Պետրոս Դուրյան «Տրտունջք» (Ա.Խաչատրյան 8-րդ դասարան)

Հարց 1. Ի՞նչ է տենչում մահամերձը:

Մահամերձը, ով դեմ էր դուրս եկել Աստծուն, ցանկանում էր ելնել աստղերի սանդուղքը: Ցանկանում էր դալկահարի պես շանթահարել, անեծք դառնալ Աստծո կողին, անկողնուն գամված տենչում էր կայծակ դառնալ:Աշխարհի անտարբերության պատճառով ոխերիմ էր կոչում Աստծուն, հառաչում ու տրտնջում: Ապրել էր ուզում....

Հարց 2. Ինչի՞ համար է ափսոսում բանաստեղծը:Ու՞մ մասին է միշտ երազել:

Ափսոսում է այն արևի համար, որի շողերը էլ չեն գրկելու իրեն:Ափսոսում է այն կյանքի համար, որը չի ապրելու:Նա դեռ ուզում էր սիրել, սիրել ու ապրել: Հուգու մեջ աստղերն էր ուզում գրկել, ուզում էր զգալ իր այտերին գարնան վարդերի քնքշանքը::
Նա երազում էր կյանքի մասին, բայց հասկանանալով, որ վայրկյանները սահում են, ու մահը մոտենում է իրեն, այն մեկին էր ուզում, ով արցունք կթափեր իր վրա: Ասում է՝ «Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան, նախ՝ կյանքը,վերջը՝ լացող մ'իր վրան», քանզի «Աստծո ծաղրն է աշխարհն ալ արդեն...»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Ա. Աբրահամյան)

ԹԵՄԱՆ՝ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ, «ԿԱՆԱՉ ԴԱՇՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ

2-րդ առաջադրանք: **Պատմվածքի գործողությունների հաջորդական ընթացքը:**

Սիրելի աշակերտ, մեկ անգամ էլ ուշադի՛ր կարդա պատմվածքը և հաջորդաբար նշի՛ր պատմվածքի դեպքերի ընթացքն ըստ հարցերի:

1. **Ի՞նչ էր անում կարմիր պառավ ձին կայծակի ժամանակ:**

Կարմիր պառավ ձին խրխինջով կանչում էր քուռակին, քանի որ քուռակը վախենում էր կայծակի ճայթյունից:

2. **Ի՞նչ էր անում քուռակը կայծակի ժամանակ:**

Քուռակը խրտնեց ու վազեց դեպի մայրը, բայց շատ էր վախեցել, չէր տեսնում մորը.ուրիշ կողմ էր փախչում:

3.**Ի՞նչը (կամ ո՞վ) առաջինը նկատեց գայլին և ի՞նչ վերաբերմունք ցույց տվեց:**

Կարմիր պառավ ձին նկատեց գայլին:Նա ճանաչում էր հովտի բոլոր բույրերն ու գույները:Կանաչ հովտի մեջ անշարժ կանգնած ձին երկար նայեց հովտին և երկար ունկնդրեց լռությունը: Պառավ ձին զգում էր, որ վտանգ կա. սիրտը վկայում էր…

4. **Ինչո՞ւ ձին չէր կարողանում արածել և ինչո՞ւ էր անհանգիստ:**

Կարծես թե կարելի էր արածել, բայց կարմիր ձին մռութը չիջեցրեց մինչև գետին, գլուխը կտրուկ վեր նետեց և սպասեց՝ ականջները սրած՝որսալու համար հովտի բոլոր թաքուն ձայները: Եվ սպասեց ռունգերը լայնացրած՝ զգալու օտար հոտերը:

5. **Ի՞նչ արեց գայլը, երբ դուրս ցատկեց իր թաքստոցից:**

Գայլը երկար ցատկով հասավ և փորձում էր հարձակվել քուռակի վրա:

6. **Ի՞նչ արեց մայր ձին, երբ գայլը բռնեց քուռակի ոտքը:**

Այդ ժամանակ մայրը ծառս եղավ և ամբողջ ծանրությամբ ու ամբողջ կատաղությամբ ձգվեց դեպի գայլն ու քուռակը, և պարանը կտրվեց ու մտրակվեց մոր ոտքերին:

7. Գայլն ի՞նչ էր ուզում անել, ինչպե՞ս էր ուզում հաղթել ձիուն:

Գայլը ճապաղեց գետնին հպված և ահա-ահա կարող էր ցատկել ու կախվել ձիու ռունգերից...

8. Ի՞նչ էր անում ձին, ինչպե՞ս էր պաշտպանում քուռակին:

Մայր էր... Պայքարում էր... Անձնազոհաբար....

9. Ո՞վ նկատեց դաշտում կատարվողը:

Դաշտում կատարվողը նկատեց փոքրիկ հովիվը:

10. Ի՞նչ մտածեց ձին, երբ լսեց շների հաչոցը:

Ձին մտածեց,ինքն ու քուռակը կփրկվեն. շները կփրկեն իրենց:

11. Ի՞նչ մտածեց գայլը, երբ լսեց շների հաչոցը:

Գայլն էլ մայր էր... Չհանձնվեց... Շարունակեց պայքարել՝ մտածելով իր ձագուկների մասին

12. Ի՞նչ եղավ վերջում:

Պառավ ձին, փրկելով ձագուկի կյանքը, հանգավ, իսկ գայլն այդպես էլ ուտելիք չգտավ իր ձագերի համար: Քուռակին խնամում էր հովիվը...քուռակը աստղազարդ էր....

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ, 7-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ (Է.Խաչատրյան)

ԹԵՄԱՆ՝ ՋԵԿ ԼՈՆԴՈՆ «ՈՍԿԵ ԿԻՐՃԸ» պատմվածքը

1-ին առաջադրանք. **Տեքստային աշխատանք**

Սիրելի աշակերտ, ուշադի՛ր կարդա պատմվածքը, ապա լրացրո՛ւ աղյուսակը: Դու պետք է պատմվածքից ընտրես որոշակի հատվածներ և լրացնես համապատասխան սյունակը: Այս առաջադրանքը վերաբերում է պատմվածքի կերպարներին: Հիշեցնեմ, որ այստեղ անշունչ իրերը ևս որոշակի դեր ունեն և կերպարներ են:

1. Ոսկե կիրճը	2. Բիլլը	1 3. Անծանոթ

Փոշու հատիկ անգամ չկար այդ կիրճում: Ծաղիկներն ու թփերը կուսական էին, մաքուր: Մատղաշ խոտը փայլում էր ինչպես թավիշ: Առվակի ափին բուսած վիրջինյան երեքբարդիների ճյուղերից պոկվում էր ձյունաճերմակ,բամբակ անման աղվամազը ևանշարժ օդում հանդարտ ճախրելով իջնում ցած:	— Չէ, ծնված օրիցս չեմ տեսել այս ռեխը,— լավ զննելուց հետո եզրակացրեց ոսկի որոնողը:— Սովորական սրիկայի մեկն է, որոնցից շատ կան այս տեղերում, անիծված լինի սա: Եվ, ախար, մեջքի՛ս է կրակում, մեջքի՛ս:	Նա երկար, ուշադիր զննում էր փոսում փռված անկենդան մարմինը, հետո պպզեց, նայեց ցած, ատրճանակ դրեց ծնկի վրա:
4. Բիլլի երգը	5. Ոսկու տենդը	6. Հեղինակը

Ծո՞ւրջդ նայիր.բարեբեր Քանի՞ լեռ է ձգվում վեր: Չարից հեռու կլինես, Մեղքիդ բեռը թե գցես Ճամփիդ կողքի փոսը խո՞ր: Միևնույն է. Աստծո հյո՞ւրն ես դու մի օր:	Թասի մեջ հող լցնելով՝ նա վազում էր ցած, լվանում այն առվակի ջրով,հետո դիվահարի պես ծանր շնչելով, սայթաքելով, հայհոյանքներտեղալով, կրկին վազում էր վեր ու նորից լցնում թասը:	Միայնակ մի թիթեռնիկ երբեմն ճախրում էր, պտտվում՝ թռչկոտելով լույսից ստվեր: Ամենուրեք լսվում էր լեռնային մեղուների թանձր, քնաբեր բզզոցը. և այդ բարեհոգի փափկամոլները նույնիսկ կերուխումի իրարանցման մեջ աշխա տում էին կոպիտ չվար վել: Կիրճի խորքում հանդարտ խոխոջող առվակն էր միայն, որ երբեմն խանգարում էր անդորրը հազիվ լսելի իր ճողփյունով: Առվակի խոխոջը նման էր քնկոտ շշու կի. մեկ խլանում էր՝ խորասուզվելով քնի մեջ, մեկ արթնանա լով՝ կրկին քչքչում:

2.3Ուսուցման առցանց միջոցների կիրառում (աշխատում են նաև աշակերտները: Վաղուց մեր գործնական աշխատանքները դարձել են շատ գրավիչ և հետաքրքիր՝

շնորհիվ ուսուցման առցանց գործիքների:

https://padlet.com/goharikedikimkrtchyan/tbbbkxxymzfb Մուշեղ Գալշոյան

https://padlet.com/goharikedikimkrtchyan/vphmhbuwlmi33jmq- Վիլյամ Սարոյան

https://learningapps.org/watch?v=p5cjfo07t22-8-ոդդասարան

https://learningapps.org/watch?v=pmawwqwdt22 - 6-ոդ դասարան

https://learningapps.org/watch?v=prrvad5wt22-տարբերդասարաններ

https://wordwall.net/ru/resource/1904862

https://wordwall.net/ru/resource/2041150

https://wordwall.net/ru/resource/1940839

https://wordwall.net/ru/resource/2040464

https://sway.office.com/DyyD5Z2QCi9MLKHH?ref=Link Մեսրոպ Մաշտոց

https://sway.office.com/wVNLibODhaySBFSH?ref=Link Եղիշե Չարենց

https://sway.office.com/5S8RyJyqwlt6WJN0?ref=Link Հովհաննես Թումանյան

https://sway.office.com/Xjs14rne5pXkREVK?ref=Link Հեքիաթ

https://sway.office.com/fcssmjGLe7GN1WqD?ref=Link Համո Սահյան

https://sway.office.com/J6yD2qHKnteGhFEA?ref=Link Պետրոս Դուրյան

https://sway.office.com/GAV0aUw7mkPjyBOx?ref=Link Ակսել Բակունց

Եզրակացություն

«Ընթերցանությունը… դրված է ուսուցման հիմքում և համարվում է կյանքի ամենաանհրաժեշտ հմտություններից մեկը: Մարդիկ, ովքեր կարողանում են լավ կարդալ, իրենց ներդրումն են ունենում ծաղկող, աշխատունակ հասարակության ստեղծման գործում: Նույն ժամանակ հենց իրենք ապրում են ավելի հագեցած կյանքով»:

Մանկավարժական աշխատանքի փորձը ցույց է տալիս, որ լավ նախապատրաստված ամեն մի ընթերցում աշակերտների մեջ առաջացնում է ոչ միայն մեծ հետաքրքրություն, աշխուժություն, այլև մշակում ու կատարելագործում է ձայնի ելևէջման ու երանգավորման, գեղեցիկ կարդալու հմտություն, և մեր աշակերտը սիրում է գիրքը, ընթերցելը: Եվ աշխատանքի վերջնարդյունքում ունենում ենք կարողունակություններ, հարստացում, գեղեցիկ ընթերցելու, առոգանությունն ապահովելու, վերլուծելու, քննարկելու, հարցադրումներ անելու, դերախաղ ստեղծելու, գիրքը, ընթերցանությունը սիրելու կարողություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1.«Կարդալը կարո՞ղ է մեզ ավելի երջանիկ դարձնել»: 2017-08-15- Վիքիպեդիա

2.Դե Սերտո, Միշել. «Կարդալը որպես որսագողություն». Առօրյա կյանքի պրակտիկա. Տրանս. Սթիվեն Ֆ. Ռենդալ 1984. 165-176, Վիքիպեդիա

3.«Ակտիվ ընթերցանության բանալի ռազմավարություններ» - Զանգակ-2019

4. Ինտերնետ-ռեսուրսներ